

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միայնակ հարցադրուած մէջ:

Անտարարողութիւնը գինում են ուղղակի

Тифлис. Редакция «Мшак»

Կտրուածքները բաց է առատան 10—2 մամ

(բացի կիրակի եւ տոն օրերից):

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լիցուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են:

Իւրաքանչիւր թուի 2 կոպեկ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԵԱԿԱՆ

ՄՇԱԿ

ԱՄԵՆՆՈՐԵԱՅ ԼՐԱԳԻՐԸ

ԵԿՈՎ 1882 ԹԻՒՆ

(Տ Ա Ս Ն Ե Ր Մ Է Կ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի)

Կը հրատարակի նոյն գիրքով և նոյն պարագաներով:

ՊՐՈԳՐԱՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II. Առաջնորդող յօդուածներ, III. Ներքին տեսութիւն, IV. Արտաքին տեսութիւն, V. Խառն լուրեր, VI. Հեռագիրներ, VII. Ֆելիտոն կամ Բանասիրական, VIII. Ցայտարարութիւններ:

ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԳԱԳԻՆԸ, 10 ռուբլ է, կես տարվան 6 ռ. Իւրաքանչիւր ամսին 1 ռուբլ: Հարցով համարները 5 կոպեկ:

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ նեանեալ հասցեով. Тифлисть, редакция «Мшак»:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԿՐՈՒՆԻ

ԲՈՂԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Եւրոպայ և Հայաստան.—ՆԵՐՔԻՆ, ՏՅՈՒՌԹԻՆ, Նամակ կաղզուանից, Նամակ Մեծ-Ղարաքիւտից, Ներքին լուրեր.—ԱՐՏԱԲԻՆ ՏՅՈՒՌԹԻՆ, Նամակ թիւրքիայից, Արտաքին լուրեր, Խառն լուրեր.—ՀՆՈՒՄԻՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԵՐՈՊԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Մշակի № 214 մէջ տպւած «Գարձեալ մի ապացոյց» առաջնորդող յօդուածում խօսելով այն հիւանդութեան վրա, որ յայտնվեցաւ թիւրքաց Հայաստանում, մենք ասեցինք, որ եթէ քրիստոնեայ ազգարնակութիւնը թւով փոքրամասնութիւն էլ յայտնվեր թիւրքաց Հայաստանում, դարձեալ քրիստոնեաներին պէտք է յանձնվեր երկրի ներքին կառավարութեան ղեկը և ներքին վարչական իշխանութիւնը պէտք է տանվեր մահմետականների ձեռքից, որոնք ամեն անգ, որտեղ ունեն պետական կազմակերպութիւն, ապացուցին, որ անընդունակ են պետական կեանքին:

Եւրոպան զուցէ կասի թէ Հայերը զեռանապատրաստ են ինքնավարութեան: Իսկ թիւրքիան, կամ մահմետական այլ երկիրները, որոնց Եւրոպան ծանաչում է դարերով անկախ պետական կեանք վայելելու իրաւունքը, միթէ նրանք պատրաստ են այդ պետական կեանքին Գարեբով նրանք պետութիւններ են կազմում և այդ դարերի ընթացքում ցոյց տուցին իրանց անընդունակութիւնը մագի շափ առաջադիմութիւն անելու իրանց կեանքի մէջ: Ամբողջ թիւրքիայում մի դպրոց չէր կայ որ տէրութիւնը հիմնած լինէր, ծանապարհներ չէր կան, գործարաններ չէր կան, ժողովուրդը մնում է վայրենի, տգէտ, աղքատ, անմաքուր, կեղտոտ կեանք վարող: Այդ է պատճառը որ մահմետական երկիրները աղբիւր են ամեն տեսակ թշուառութիւնների, սովի, ժանտախտի, խօլերայի:

Ասեց թէ Հայերը թիւրքիայում տգէտ են, վայրենի են, ինքնավարութեան համար անպատրաստ են: Բայց և թիւրքերը ապացուցին որ նոյնպէս ինքնիշխանութեան համար անպատրաստ են, դարերով վայելելով այդ ինքնիշխանութիւնը և որպէս հետեանք այդ անպատրաստութեան և ան-

բարեկարգութեան այս թուրքիան պատճառ է տարածել ամբողջ լուսաւորված աշխարհում սարսափելի տրտէր:

Մինչև որ մի ժողովուրդ ծնչված է, ստորացրած է, ինչքան էլ ցեղական զեղեցիկ յատկութիւններ ունենար այդ ժողովուրդը, դժուար է ասել որ նա ընդունակ է, կամ ընդունակ չէ քաղաքակիրթ կեանքին: Բայց ապահովաբար նրա կեանքը հաստատ օրէնքներով և կանոնաւոր աշխատանքներով յայտնվում է կը տեսնէք արդեօք ունի նա ընդունակութիւններ քաղաքակիրթագէտ զարգանալու:

Այդ երեւոյթը պատահել է և մեր երկրում: Երբ Ռուսաստանը նուաճել է Անդրկովկասը, Հայերը նոյնքան անզարգացած, ասեց վայրենի էին, որքան կովկասեան միւս ազգերը՝ թուրքերը, պարսիկները, վրացիները և այլն... Բայց կարծ ժամանակում, վայելելով ռուսաց կառավարութեան կողմից առած նիւթական ապահովութիւնը, միջոց ունենալով նիւթապէս, տնտեսապէս, բարոյապէս և մտաւորապէս զարգանալու, կարծ ժամանակում, ասում ենք, Հայերը, կովկասեան բոլոր միւս ազգերից առաջադէմ դարձան: Դա ամենալաւ ապացոյց է, որ ցեղով ընդունակ մի ազգութիւն երբ ստանում է ապահովութիւն և զարգանալու համեմատական, ազատութիւն, շատ շուտ առաջադիմութիւն է անում:

Ռուսաստանը նուաճելով Անդրկովկասը բոլոր նրա ազգերին հաւասար կերպով առաջարկեց քաղաքակիրթ վերու միջոցներ. ամենքին հաւասար կերպով բաց արաւ իր թէ միջնակարգ, թէ բարձրագոյն դպրոցների դռները, ամենքին հաւասար կերպով միջոց տուց պետական յեղուն ուսումնասիրելու և նրա միջոցով ծանօթանալու ռուս գրականութեան հետ, ամենքին հաւասար կերպով իրաւունք տուց մտնել պետական թէ քաղաքական և թէ գիւնարական ծառայութիւն, պարսպիլ արհեստներով, արուեստներով, գեղարուեստներով, առատուրով, երկրագործութեամբ:

Եւ ահա կովկասեան բոլոր ազգերից Հայերը, իրանց բնական, ցեղական ընդուն-

ակութիւնների շնորհով, հայերը, որոնք ռուսաց տիրապետութեանց առաջ նոյնքան վայրենի դրութեան մէջ էին երևում, որքան կովկասեան միւս ազգութիւնները, այժմ բոլորից առաջադէմ են կեանքի ամեն ծիւղերի մէջ:

Հայերը հարստացան, հայերը լցրին գիմնազիւնները և համալսարանները իրանց աշակերտներով, հայերը բոլոր տեղական ազգերից ամենից լաւ տիրապետում են պետական լեզուն, հայ բժշկները մրցում են ռուս և գերմանացի բժիշկների հետ, հայ ազգագետները պակաս չեն ռուս փաստաբաններից, հայ պրօֆէսորները մրցում են Մոսկվայում, Օդէսայում, Բեռլինում և Յիւրիխում օտար պրօֆէսորների հետ, հայ գիւնարականները յայտնվում են կովկասեան ամենալաւ գիւնարականներից, հայ պաշտօնեաներ իրանց հասկացողութեան, պարտաճանաչութեան և ընդունակութեան կողմից պակաս չեն պետական միւս պաշտօնեաներից: Երկրի առուտուրը, ֆինանսական գործունէութիւնը հայերի ձեռքում է, հայոց դպրոցները պետական դպրոցներից յետոյ երկրի մէջ առաջին տեղն են բռնում: Ահա ինչ է նշանակում ցեղական յատկութիւններ: Բայց ո՞ր թիւրք, կամ պարսիկ, կամ օս, կամ նոյն իսկ վրացի յայտնվեցաւ ընդունակ Բեռլինի կամ Յիւրիխի, կամ Օդէսայի ամբիօններից գիտական դասօթստութիւններ կարդալու: Մի հայ գիւղացի, մի հասարակ լուսեցի՝ Յիւրիխի համալսարանի պրօֆէսոր է, մի այլ հայ հասարակ գիւղացի թիֆլիսի մէջ փաստաբան է, մի երրորդը բժիշկ է, չորրորդը նոտարիոս է և այլն և այլն: Կարծ ժամանակում հայերը և հայուհիւները ընդունակ յայտնվեցան և զեղարուեստների մէջ, երաժշտութեան, երգեցողութեան, նկարչութեան, մէջ:

Նոյնը կը պատահի եթէ թիւրքաց Հայաստանին ինքնավարութիւն արվի. չի անցնի քսան և հինգ, շատ շատ մի երևաւուն տարի և հայերը, որոնք այժմ թիւրքերին և քրիւրդերին, իրանց տիրապետութեամբ և վայրենութեամբ հաւասար են երևում, յանկարծ բոլոր շրջապատող ազգերից առաջադէմ կը յայտնվեն: Ահա ինչ է նշանակում ցեղական ընդունակութիւններ: Մեր երկրը որ ռուսաց տիրապետութեան օրով յանկարծ ստացաւ աւելի լաւ կառավարութիւն, քան թէ պարսից ժամանակ, ստացաւ ապահովութիւն և մարդկային իրաւունքներ, ամենալաւ ապահովեց և այդ ճշմարտութեան: Երևանեան թիւրքերը և պարսիկները մնացին նոյն անշարժ դրութեան մէջ, որի մէջ էին պարսից տիրապետութեան ժամանակ, իսկ նոյն նահանգի հայերը առաջ գնացին:

Այդ ճշմարտութիւնը ամենից լաւ հասկացաւ հանդուցեալ և անմոռանալի Ալէքսանդր II կայսրը, երբ ամենից առաջ Սան-Ստեփանօսի զաշնագրով պահանջեց ինքնավարութիւն թիւրքաց Հայաստանի համար, ապահովութիւն քրիւրդ և չէրքէս աւազակների դէմ, ապահովութիւն կազմակերպված վարչութեան և դատարանե-

րի միջոցով տեղական պաշտօնեաների զեղծութեան դէմ:

Ինչքան էլ մի ազգ ինքնօգնութեամբ պատրաստվի ինքնավարութեան համար, դժուար թէ նոյն հետեանքներին, և նոյնքան կարծ միջոցում կարողանայ հասնել ցանկացած նպատակին, մինչև որ վարչական ապահովութիւն չունենայ:

Իսկ եթէ Եւրոպան կասի թիւրքաց հայերին. «դուք պատրաստ չէք ինքնավարութեան», այդ փաստ մտքին կարելի է միայն այն պատասխանել թէ մի ազգ, որին իրաւունք չեն տալիս պատրաստվելու, երբեք ոչ մի բանին պատրաստ չի լինի, մի ազգ որ սարսափելի ծնչման տակ է, միշտ անպատրաստ կը մնայ: Ոչ մի ազգ ոչ մի բանին երբեք պատրաստ չէ. պատրաստվելու համար պէտք է իրաւունք ունենալ վարժվելու պատրաստութեան մէջ: Ստրկութեան մէջ չէ կարելի սովորել ազատութիւնը, ինչպէս չէ կարելի սովորել լողալ երբեք ջուրը չը մտած, սովորել մանգալ երբեք չը ման եկած, սովորել երգել առանց փորձելու ձայն հանել, թէ կուզ սկզբից այդ հանած ձայները կը լինեն անխորժ և աններդաշնակ:

Եթէ երևանեան հայերը մինչև այժմ մնային պարսից տիրապետութեան տակ, նրանք մինչև այժմ էլ կը նմանվէին Գալբէթի անշարժ հայերին, իսկ երկարվելով աւելի բարեկարգ կառավարութեանը, նրանք այժմ ամեն բանին ընդունակ դարձան:

Իսկ եթէ Եւրոպան կարծում է թէ թիւրքաց հայերը անընդունակ են վարչական ինքնավարութեան, ի՞նչ պէտք է ասի նա նոյն իսկ թիւրքիայի վրա, որ այսքան զարեւր անկախ պետութիւն է կազմում և նոյն իսկ այսօր զեռ և ս այնքան անբարեկարգ է որ այս թուրքիայ էլ վտանգ է ներկայացնում ամբողջ լուսաւորված աշխարհի համար, զանազան ցաւերի բուն լինելով:

Քող չը մոռանան այն միտքը որ մենք միշտ յայտնել ենք. կան ցեղեր, որոնք ընդունակ են զարգացման, բայց կան և այնպիսիներ, որոնք անընդունակ են քաղաքակիրթութեան, մինչև որ չենթարկվեն ուրիշ ցեղերի իշխանութեանը, մինչև չը խառնվեն նրանց հետ ու չը կերպարանափոխվեն:

Հայոց ցեղը ապացուցել է որ բարեկարգ դրութեան, աշոյ հանգամանքների մէջ դրված լինելով, նա ընդունակ է կուլտուրական կեանքին, իսկ թիւրք ցեղը, ընդհանրապէս, ապացուցել է, որ ինչքան էլ անկախութիւն վայելի, նա անընդունակ է քաղաքակիրթ կեանքին, առաջադիմութեանը և միշտ անշարժ է մնում մինչև որ ղեկավարված չը լինի մի աւելի ընդունակ ցեղի ձեռքով, մինչև որ այդ ցեղը չը խառնվի մի այլ ցեղի հետ խառն պատկերի միջոցով:

Մարդկութեան համար ո՞րն է աւելի շահաւետ և օգտաւետ որ ընդունակ, թէ անընդունակ ցեղերը առաջնակարգ դեր խաղան այս կամ այն երկրի մէջ:

Անընդունակ ցեղերի տիրապետութիւնը

արուեստական կերպով պահպանելով Արուստան ինչ հետեանք է ստանում. խոսովութիւններ, ձնչում, ֆանասիկոսութիւն, անկարգութիւններ, աւազակութիւն, խօլերա և ժանտախտ:

Այդ հետեանքները դեռ շատ անգամ իրանց զգալ կը տան լուսաւորված Արուսային:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԿԱՂՋՈՒԱՆԻՑ

Նոյեմբերի 8-ին

Կազմուած, որ ընկած է Արաբի կարաւային կողմը, Մամաքար լեռան հիւսիսային կողմը՝ այդ Մամաքար լեռան սահման է ուսուց և տանկաց. զորա կարաւային կողմն է ընկնում Ալաշկերտը. յիշեալ լեռանը շարունակութիւն է Գէօսա-զազ լեռներին, որոնք զէպի արևմտաճարաւային կողմն են, իսկ Մամաքարը շարունակվում է արևելաճարաւային կողմն և միանում է Սեպան լեռան հետ: Մամաքար լեռին զէպի հիւսիս կազմուած արևելեան կողմը ձգված է մի ձոր նոյն լեռան արևմտով (Մամաքար): Կազմուած ընկնելով Արաբի, Մամաքար լեռան և Մամաքարի մէջ տեղ մի փոքրիկ փոս է, որտեղ են՝ քաղաքը, այգիները և զաւարները: Գաղաքը շատ մօտ է Մամաքար լեռան ստորոտին, որ բոլորովին նմանութիւն չունի քաղաքի, կարելի է սակ զիւղաքաղաքը: Այժմ ընկի հայ բնակիչ կայ երկու հարիւր տուն, իսկ օտարականք, որոնք վերջին պատերազմից յետոյ եկած են, տներ և այգիներ են աւած, կը լինեն հարիւր տուն. օտարականք գլխաւորապէս են՝ ալեքսանդրապոլցի, բիթլիցցի և հին քաղաքացի. թէպէտ առաջ եղել են այստեղ հինգ հարիւր տուն տանիկներ, բայց այս վերջին ժամանակներում համարեա բոլորը գաղթել են և մնացողները ևս մինչև մարտ ամիս բոլորովին կը գնան:

Տեղի ընկի ժողովուրդը ըստ կարողութեան կարելի է երկու կարգ բաժանել, իսկ պարսպանայ նայելով կարելի է մի սակ, որովհետև հարուստներն էլ այգեպան են և աղքատներն էլ. ով որ երկու էլ ունի՝ նա հարուստ է, պատճառ որ նա քարվան ունի: Այդտեղի բնակիչները իւրաքանչիւրը երկու ձեռք տուն ունեն, մի ձեռքը քաղաքում, միւսը այգիում. երբ որ գարունը սկսվում է, մայիս ամսից նրանք ընտանիքով ընչում են այգիները, այնուհետև քաղաքում կազմուած չէ կարող տեսնել:

Գարունից սկսած խեղճ կազմուածներն իր էջերը առաջ գցած թէ հարուստ, թէ աղքատ, շաբաթը երեք անգամ գնում է Ղարս իր այգիի թաց մրգերը ծախելու. իսկ այգիում իր ընտանիքը, երեխայքը, ծերը և պառաւը աշխատում են, ժողովում են, բնօրերը կապում են մինչև տան աղամարդը երրորդ օրը գայ Ղարսից, և դեռ մի գիշեր չը հանգստացած՝ վերադառնում է գարնանը Ղարս: Այսպէս տանջվելով աշխատում են մինչև հոկտեմբեր ամիսը. իսկ հոկտեմբերին և նոյեմբերին նրանք սկսում են իրանց աւետուրը փոխել գիւղացիների հետ, չորացած միւրգեր են տանում գիւղերը և բերում են իրենց տան համար ձմեռվայ պաշար՝ ցորեն, իւզ, պանիր, անար, բրինձ և այլն, և այլն...

Իսկ վարելահողերը ուժ ձեռքն են. վարելահողերը տանիկների ձեռքն են եղել, իսկ հիմայ եթէ գաղթել են, այդ հողերը ծախել են հարուստների վրա, բայց այս ևս պէտք է սասած, որ արանց վարելահողերը բաւականացուցիչ չեն բնակիչներին:

Կալով վաճառականներն այսպի կանս, որ տեղիս վաճառականները, արհեստաւորները բոլորն էլ օտարներն են, Ուրեմն անս համառօտապէս նկարագրելով տեղիս ժողովրդեան զրուկները, այժմ մի փոքրիկ կարծիք ևս հարկաւոր է յայտնել նրանց մտաւոր զարգացման մասին:

Արդեօք արանք կարող են պահել կանծաւոր ուսումնարան, ինչպէս Ռուսաստանի ուրիշ գիւղերում և քաղաքներում. կարող են արանք հարակուսեան օգտակար մասերի վրա մտածել, կարող են ուսումնարանի, եկեղեցու և այլ ընդհանրութեան վրա մտածել: Եւ, իմ կարծիքով, կը պատասխանեմ վերոյիշեալ հարցերին, ոչ. կազմուածքը երբէք չեն կարող հասարակութեան

վերաբերեալ մասերի վրա մտածել այն պատճառով, որ արանք յունիս ամսից սկսած մինչև դեկտեմբեր ամիսը շարաւարվելով հազիւ իրանց տարեկան պիտոյքներն են հոգում և, եթէ կարելի է սակ, ամիսներով զրացին զրացու երես չէ տեսնում, հետաքար ինչպէս որ մարմնով հետու են իրարից, ևս առաւել հոգում, որովհետև խեղճները ամբողջ տարուայ մէջ ժամանակ չեն կարողանում գտնել, որ իրանց հոգուց ցանկութիւնները իրարու հազորդեն. իսկ սիրելի ընթերցողըս կառաջարկէ ինչ թէ, թող ձեռքը մտածեն զրա մասին: Բայց ևս կը պատասխանեմ, գիտէ՞ք ինչ կայ, սիրելի ընթերցող, նրանք զեկտեմբերից մինչև մեծի պահոց օրերը հազիւ կարողանում են աչք բացանել խնկուց և իրանց հարսանիքներից, իսկ մեծի պահոց օրերը սկսվում են թէ չէ, զարմեալ սկսում են իրանց աշխատութիւնները: Ուրեմն պարզ երևաց, որ մի օր ևս ազատ ժամանակ չը կարողացաւ գտնել կազմուածներն, որ մտածէ ընդհանրութեան՝ ուսումնարանի և եկեղեցու վրա. ուստի խնդրում ենք ուսումնարանների թեմական տեսչից, որ բոլորովին մի առանձին ծրագիր կազմէ կազմուած ուսումնարանի համար, որովհետև այս քաղաքի վարչութիւնը բոլորովին բացառութիւն է, ուրեմն ընդհանուր ուսումնարանաց կանոնի սակ չէ կարող մտնել: Ահա երրորդ ամիսն է երկու ուսուցիչ ունեն և ամսական երկուսին եօթանասուն ռուբլի վարձ են վճարում, բայց ուսումնարան դեռ ևս մի աշակերտ չէ մտել, ուսուցիչները բոլորովին փողոցներն են շափում. բայց ի հարկէ ուսուցիչները միջաւորութիւն չունեն, թող պարոն թեմական տեսչը ուչ զարմնէ ուսուցիչ վրա: Մինչդեռ ուրիշ տեղեր ուսուցիչ սով է. իսկ կազմուածում առատութիւն, որովհետև տարին երկու ուսուցիչ ճանապարհ են ձեռնում, իսկ ուսումնարանի աշակերտներից տարեկան տասը համալսարան են ուղարկվում:

Օտար քաղաքացիներից տասը տուն հազիւ բարի ժառանգներ լինեն, իսկ մնացածը որ քաղաքում որ չար գաւակներ կան, փախել են կազմուած, բոլորը կայսից փախած են. խնդրում ենք ձեռնարկ և պատուելի վաճառականներին, որ մի գուցէ ցանկութիւն ունենան զինելու կազմուած, որովհետև կազմուած ոչինչ չէ, եթէ ոչ Հայաստանի Սիրի:

Պարոն թեմական տեսչից խնդրում ենք շուտով բարեկարգէ ուսումնարանը, որպէս զի ժողովրդի բարի գաւակներն էլ չը խառնվեն այն օտար չար գաւակների հետ:

Ճանապարհորդ

ՆԱՄԱԿ ՄԵՃ-ՂԱՐԱՔԻՒՆՈՒՑ

Նոյեմբերի 13-ին

Կլովս անյայտացաւ. եզս կորաւ. ոչխարս կերան. զազս մորթեցին. մողիս զողացան. գերանս տարան. զուգանս թալանեցին... և այլ և այլ այսպիսի հազարաւոր արտուշներ շատ յաճախ կրկնվում են Ղարաքիլիսում: Բայց երբ հետախուզում ես՝ այդ զողացած ապրանքների ետեւից, զազը՝ հայ զրացու հարիւրի միջից է զուրս գալիս, գերանները՝ հայ զրացու տանիքի վրա են գտնվում, ոչխարի միւսը՝ հայի տանն է բռնվում, զողացած քարերը՝ հայի տան պատի ճակատին են փայլում, և այլն և այլն: Մրանով ևս երբէք չեմ կամենում բոլոր զարաքիլիսցիների պատիւը արտաստորել զողութեան մէջ, ոչ, այնպիսի յանցանք ևս չեմ վստահանայ գործելու: Միայն Ղարաքիլիսում, որպէս ցեց, բուն են զրել մի քանի անամօթներ, որոնց ստամոքսը սովոր է միայն մարսելու զողացած այծեր, զրացու մողիներ ու եղներ...

Եթէ երբեմն երբեմն զողութեան մէջ մեղադրվում են կազակներ էլ, հաստատեմք, սիրելի զարաքիլիսցիք, որ զարմեալ յիշեալ չափութեանանների մասը մէջն է. Առանց տանու աւազակների օգնութեան, եթէ մի օտար մարդ մտնում է ձեր տունը, դա հազուադէպ բացառութիւն պէտք է համարել: Կողը միշտ տանից է լինում, որ ահազին եզը երթկից են տանում:

Այժմ հարցը արանու՞ն է թէ, երբ Ղարաքիլիսի իշխանները իրանց բարի աչքով պոլիցիայի ու զատաւորի ներկայութեան զողացած ապրանքները ամենագորաւոր փաստերով որ պայցուցանում են այս և այն զրացու վրա, հանելով նրա տանից զազի միւսը, ոչ իսրի զառուրմէն,

զողացած գերաններ... Ինչ են անում այդպիսի աներես ու լիք գողերին:—Ոչինչ չեն անում մեր մարդասեր և բարեխիղճ իշխանները: Բան չը կայ, զորան քարն է սուել, երկու գերան է զողացել, թող չորսը վճարէ. մի ոչխար է կերել, թող երկու ոչխար տայ... ստում են մեր բարեխիղճները և ակնյայտի գողին դարձեալ և դարձեալ ներում: Այժմ հարցում ենք. այսպիսի թեթև նախատական խօսքերով կարելի է ապականված գողին խրատել և կամ զողութիւնը արմատախիլ անել զիւղից: Մարդասիրութիւնն էլ, զիջողութիւնն էլ իր չափն ու սահմանն ունի: Այդպիսի շուռլ մարդասիրական զիջողութեամբ, ինչպէս ապացուցանում են, գողին աւելի վարժեցնում ենք իր ապականված արհեստի մէջ և, որ վտանգաւորն է, ուրիշներին էլ հրապուրում ենք զէպի այդ կորստաբեր ճանապարհը: Վերջապէս այդպիսի շեռտակար զիջողութեանց հետեանքն այն կը լինի, որ զարաքիլիսցիք, մի քանի տարուց յետոյ, երկու գողի փոխանակ, կունենան մի քանի գողեր: Թող խրատ լինի մեզ համար Համամլին, որի բնակիչները, մէկը միւսից չար օրինակ առնելով, այսօր շատ քչերը ազատ են զողը անունը կրելուց: Ով Համամլիի միջից անցկենայ, երկու աչքի փոխանակ տասն աչք պէտք է ունենայ, որ կարողանայ շուռլ սալամաթ, զուրս զալ զիւղից, իսկ եթէ զիջեր այդտեղ իշխանեց ու ոչինչ չը կորցրեց, կատարեալ հրաշք պէտք է համարել: Ե՛հ, թողնենք այդ ապականված գիւղը:

Օտարականը առաջին անգամ Ղարաքիլիս մտնելիս, դեռ երկու երեք վերստ հեռաւորութիւնից կը նկատէ գիւղի վերին ծայրում մի եռաբարկաւի վիթ խարի. շինութիւն, բազմաթիւ քաց լուսամուտներով ու զանրով: «Արդեօք դա պալատն է, մարակոց է, նշանաւոր հարուստի ապարանք է... հարց ու խնդիր կան ինքն իրան հեռաբարձված օտարականը, որ մտնելով այդ փառաւոր շինութեան մէջ, կը զարմանայ, տեսնելով նրա երեք յարկերի մէջ բազմաթիւ սենեակներ ու բաժանմունքներ: «Սա՛ հարուստ իշխանի դահլիճն է, սա՛ ընդունարանն է, սա՛ առանձնասենեակն է, սա՛ նշարանն է, սա՛ սեղանատունն է... ենթադրում է ինքն իրան օտարականը, զբայց սա ինչ է, սա, սա, սա... կրկին հարցնում է հետաքրքիր մարդը. վերջապէս օտարականը այդ հոյաւկապ շինութեան բոլոր ծակ ու ծովը շրջելով զուրս է գալիս այդտեղից հետեալ հասաչանքով, չախ, ախոս որ աւերակ ես, ողորմելի շինութիւն:»

Հետաքրքիր ընթերցող, այս եռաբարկաւի բարձրագագաթ շինութիւնը մի անուանի հարուստի (Չուրաջովի) արագի գործարանն է եղել. իսկ վերին յարկը նրա գարդարուն բնակարանն էր: Պ. Չուրաջովը զուրս հանելով գործարանի միջից իր կարասիները և գործարանի բոլոր իրեզները, զատակ պատերը շինած պատրաստի, կարծեմ 71 թ.ին, 5 հարիւր ռուբլիով ծախում է տեղիս զարոցի վրա: Դա մի բազղ էր, որ 10 հազար ռուբլու շինութիւնը 5 հարիւր ռուբլով կարողանում է առնել հեռաւոր հոգաբարձութիւնը: Հէնց այս բողբիս այս շինութիւնը, իր առջև գտնված դատարկ գետինով, զարմեալ 10 հազար ռուբլի արժէ. Բայց անհոգութեան երեւից այդ շինութիւնը իր գերեզմանին է մօտենում: Անգուժ և անխիղճ մարդիկ առանց ամաչելու զողանում, անզգաբար տանում են պատի քարերը և վրէն ամրացրած գերանները: Այսպէս շարունակվելով, մի 5 տարուց յետոյ, այդ փառաւոր շինութեան հետքն էլ չի երևայ և զըպրոցի 5 հարիւր ռուբլին էլ զուր կը կորչի:— Հարց. կարելի է վերանորոգել:

Եթէ իւրաքանչիւր տուն ձրի բերի 5 օայլքար, վճարի երկու փայտ և մի մշակ ուղարկի չորս օր բանելու և այս բոլոր ձրի օգնութեան հետ եթէ հոգաբարձութիւնը ծախէ 5 հազար ռուբլու այն ժամանակ այդ փառաւոր շինութիւնը կարծեալ մինչև 20 հազար ռուբլու և իր մէջ կը տեղաւորէ՝ երկուսը զարոցները, մի թատրոնական համեստ բեմ և դեռ մի քանի սենեակ էլ վարձով կը տրոխի. որից կարելի է եկամուտ ստանալ գոնէ 500 ռուբլի: Իսկ հին զարոցը կամ կը ծախվի գոնէ 5 հազար ռուբլով, կամ տարեկան քրէ կը բերէ գոնէ 200 ռուբլի:

Ղարաքիլիսում այնպիսի իւզալի հարուստներ կան, որոնք ոչ թէ երկու գերան, այլ եթէ ցան-

կանան 20 գերան էլ կը տան, Բայց ի՞նչ եմ ասում: Ղարաքիլիսի նշանաւոր հարուստներից մէկն էլ Արոյնց Գովհաննէսն է, որ 40 հազար ռուբլի բանկուճն ունի, տարեկան մի 4 հազար ռուբլու էլ ուրիշ զուտ եկամուտ ունի, բայց այդ հայ կրեստը, հաստատ գիտեմ, որ ոչ միայն երկու մարդակ չի տայ, այլ շատ ուրախ կը լինի, եթէ այդ շինութիւնը զանգուր և մի քանի քար էլ իր տունը ուղարկեն. Բայց մնացեալ հարուստները չեմ կասկածում, որ իրանց արժանաւոր չափով կօզնեն:—Բայց օգտակար է այժմ այդ հարցը զարթեցնել, թէ ոչ, ևս կարծում եմ որ օգտակար է և զործը իր նպատակին կը հասնի, եթէ փորձող լինել ևս մինչև անգամ համոզված եմ, որ կայ մի հայրենասէր և բարեսիրտ անձն, որ թէև Ղարաքիլիսից հեռու է, բայց սրտով կապված է իր նախկին զրացիների հետ, ինչպէս ցոյց են տալիս նրա ազգաօրական գործերը: Հէնց որ սկսվեց այդ շինութեան վերանորոգութիւնը, յիշեալ անձն զարմեալ չը պիտի խնայէ իր օգնութիւնը իր նախնակիցներին:

Թող ժողով կազմեն, չափեն, ձեռն, խորեն, եթէ անհար է, զարմեալ մի քանի ժամանակ էլ համարեն:

Երէկ զարմեալ երկու գերան զողացել տարելին այս շինութիւնից: Այդ զողութիւնը պատճառ եղաւ, որ այս քանի խօսքը նուրբեցիք այդ աւերակներին:

Ինձ շատ լաւ յայտնի է որ «Մշակը» մինչև կեկտրը խրված է զանազան տեսակ նիթերի մէջ. հարկաւոր է կամ կարճ գրել կամ լուրի ձևով զուրս բերել, բայց այսպիսի բաները լուրի ձևով գրելով ոչինչ զուրս չէ զալիս: Բոլորովին լուրով և ոչինչ չը գրելով էլ մեր ցանքը բարձրվում են միմեանց վրա և վատ հետեւանքներ առաջացնում:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ յանձնեցիք պ. Գիւրգենյանին մեր խրճատգրութեան մէջ եղած փողերը, որոնք գոյացան նրա ֆոտոգրաֆիական ժողովածուի ծախելուց. իսկ այսօր ստացանք Աստրախանից, պ. կարապետ Դաւթեանից 20 ռուբլու նոյն ժողովածուի մի օրինակի համար:

Աստրախանից պ. Կ. Դաւթեանից ստացանք 3 ռուբլու լուրեալ գիրքներից բաժանորդագրին Առաջվայ փողերի հետ կանի 817 ռուբլու:

Հանգալիմանք այս բողբիս, ինչպէս մեզ գրում են, բաժանված է երկու կուսակցութիւնների, որոնք կազմվել են զարոցի մասին եղած երկ պատակութիւնների պատճառով. իսկ զարոցը մինչև հիմա էլ բացված չէ. Մի կուսակցութիւն միւսի բերած վարձապետին չէ ուզում և ընդհակառակն. Այդ բոլոր խռովութիւնների պատճառը, ինչպէս հաւատացնում են, մի անձն է. որ ինքն է կամենում վարձապետ դառնալ:

Աստրախանից ստացանք 137 ռուբլու պ. Բֆ ֆիին յանձնելու համար:

Կովկասեան պատերազմից օրջի հրատարակող պ. Կոնդրատեֆո ուղարկել է մեր խմբագրութեանը իր այդ օրացոյցը՝ մի օրինակ: Այս տարի, պէտք է խոստովանվել, օրացոյցը աւելի մեծ խնամքով է հրատարակված, քան թէ առաջվայ ժամանակներում: Նա հարստացրած է հայոց և մասնատական տեսերի աւելի հարուստ ցուցակով, նոյնպէս յիշված են օրացոյցի մէջ նշանաւոր անցքեր կովկասեան պատերազմից: Երեսուժ է թէ հրատարակողը մեծ աշխատութիւն գործ զրել այդ օրացոյցը կազմելու համար: Տիւր շատ մաքուր է նոյնպէս:

Այս օրերս կը հրատարակենք «Մշակի» մէջ մեր այն բոլոր բաժանորդների անուններն ու ազգանունները, որոնք անցեալ թէ այս տարի զրվելով մեր լրագիրն չեն վճարել իրանց բաժնարկները:

Մեզ պատմում են որ զաւառներում քեռու են քանաններ և արեղանք. Հայաստանի սեփականների անունով փողեր ժողովելով հայոց սարակութեան մէջ և հաւատացնելով ժողովրդին